ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 4-Ն
20 փետրվարի 2014թ.

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 143-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3)-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության *10* կողմ, *0* դեմ, *0* ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Կապանի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 143-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ և հաստատել հավելվածների աղյուսակների հետևյալ ցուցանիշները՝

1) Որոշման 3-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման» թիվ 2 հավելվածում, համաձայն հավելված 1-ի:

2) Որոշման 4-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման» թիվ 3 հավելվածում, համաձայն հավելված 2-ի:

3) Որոշման 5-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/» թիվ 4 հավելվածում, համաձայն հավելված 3-ի:

4) Որոշման 6-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները» թիվ 5 հավելվածում, համաձայն հավելված 4-ի:

5) Որոշման 7-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման» թիվ 6 հավելվածում, համաձայն հավելված 5-ի:

Կողմ (10)՝

ՎԻԼԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ԱՐԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ	ԺԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԿԱՐԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ
ՄՈՒՐԱԴ ՄԵԼԻՔՅԱՆ	ՎԱՀԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄՀԵՐ ՄԻՐԶՈՅԱՆ	ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2014 թ փետրվարի 20

ք. Կապան